ԻՆՖՈՐՄԱՑԻԱ ИНФОРМАЦИЯ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Բնագիտության և տեխնիկայի պատմությունը Սովետական Հայաստանում իր ծնունդով կապված է հանրապետությունում գիտության բուռն զարգացման հետ։ Գիտական և ուսումնական հաստատությունների ստեղծումը և հատկապես Գիտությունների ակադեմիայի հիմնադրումը 1943 թ. ոչ միայն անհրաժեշտ պայմաններ ստեղծեցին բնագիտության զարգացման համար, այլև հրամայական պահանջ դրեցին՝ լուրջ ու բնադատարար հետազոտել և վերլուծել անցյալի գիտական ժառանգությունը։ Դա թելադրվում էր գիտության զարգացման ներկա ընթացքը ավելի լավ ըմբռնելու և ապագան կանխագծելու անհրաժեշտությամբ։ Սովետական տարիներին Հայաստանում բնական գիտությունների զարգացման պատմությամբ զբաղվել են Հ. Ա. Օրբելին, Լ. Ա. Հովհաննիսյանը, Ա. Տեր-Պողոսյանը, Լ. Սեմյոնովը, Տ. Ղաղանչյանը և ուրիշներ։

Սակայն առանձին գիտնականների նախաձեռնություններ խթանելու և բնագիտության պատմության բնագավառի աշխատանքներին լայն թափ և կազմակերպված ու պլանավորված բնույթ տալու համար անհրաժեշտ էր ունենալ պաշտոնական մի հիմնարկություն։ Եվ ահա 1958 թ. ՀՍՍՀ ԳԱ նախագահությանն առընթեր ստեղծվեց Բնագիտության և տեխնիկայի պատմության հանձնաժողով, որը երկու տարի անց վերակազմավորվեց որպես Բնագիտության և տեխնիկայի պատմության խորհուրդ։

Խորհուրդը Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի գիտա-կազմակերպական և կոորդինացնող օրգանն է բնագիտության և տեխնիկայի պատմության բնագավառում։ Նրա հիմնական խնդիրներն են՝ մշակել բնագիտության և տեխնիկայի պատմության հարցերը Հայաստանում, կազմել հեռանկարային պլաններ, հրատարակության պատրաստել գիտական աշխատություններ, հրավիրել և կազմակերպել հանրապետական կոնֆերանսներ ու գիտական նստաշրջաններ, ապահովել Հայաստանի գիտության պատմաբանների մասնակցությունը միութենական և միջազգային գիտաժողովներին, աջակցել և ուղղություն տալ բնագիտության պատմաբաններին, կոորդինացնել նրանց աշխատանքները։

Ներկայումս խորհրդի կազմում գործում են բնագիտության և տեխնիկայի պատմության մեթոդաբանության, գիտատեխնիկական հեղափոխության տեսության և պատմության, մաթեմատիկայի և մեխանիկայի, աստղագիտության, քիմիայի, երկրաբանության, աշխարհագրության, կենսաբանության, տեխնիկայի, շինարարական տեխնիկայի, բժշկության և գյուղատնտեսության պատմության սեկցիաները։

Խորհուրդը միաժամանակ կատարում է նաև Բնագիտության և տեխնիկայի պատմության և փիլիսոփայության սովետական ազգային միավորման հայկական բաժանմունքի պարտականությունները, և այս առումով մեծանում է նրա ազդեցության ոլորտը։ Խորհրդի սեկցիաների անդամներ են նաև ակադեմիայի համակարգին չպատկանող գիտական և ուսումնական հաստատությունների աշխատողներ։ Այսպիսով խորհուրդը իր շուրջն է համախմբում հանրապետությունում գիտության պատմությունն ուսումնասիրող բոլոր մասնագետներին։

Սեկցիաները գործում են ըստ հնգամյա գիտա-հետազոտական պլանների, որոնք մանրամասն ու հանգամանորեն քննարկվում են սեկցիաներում և հաստատվում խորհրդի ընդլայնված նիստերում։ Հետազոտական աշխատանքների արդյունքներն այնուհետև հրատարակվում են առանձին մենագրությունների կամ հոդվածների ձևով։

1960 թ. խորհրդի հրատարակությամբ հայերեն և ռուսերեն լույս տեսավ ակադ. Վ. Հ. Համբարձումյանի գրքույկը՝ «Գիտությունը Հայաստանում 40 տարում», իսկ 1973 թ. հրատարակվեց «Գիտությունը Հայաստանում 50 տարում» ստվարածավալ գիրքը, ուր ամփոփ ձևով տրվում է բնական և հասարակական գիտությունների զարգացման ընթացքը Հայաստանում սովետական կարգերի հաստատումից մինչև 1970 թ.։ Սա կոլեկտիվ աշխատություն է, մասնակցությամբ 110 հեղինակների, որոնց թվում կան շատ անվանի գիտնականներ՝ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ և թղթակից-անդամներ, գի-

տության դոկտորներ ու թեկնածուներ։ Կոլեկտիվ աշխատանք է նաև 1968 թ. լույս տեսած «Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիան 25 տարում» աշխատությունը, որը ներկայացնում է մեր հանրապետության գիտական այդ խոշոր համակարգի գործունեության ամրողջական պատկերը 1943—1968 թթ. ընկած ժամանակաշրջանում։

1960 թ. սկսած խորհուրդը պարբերաբար հրատարակում է գիտական ժողովածուներ «Բնագիտության և տեխնիկայի պատմությունը Հայաստանում» ընդհանուր վերտառությամբ։ Լույս է տեսել ժողովածուի 5 հատոր[1], որոնցում զետեղված աշխատությունները նվիրված են բնագիտության պատմության տարբեր հարցերին և ժամանակագրական առումով ընդգրկում են հնագույն շրջանից մինչև մեր օրերը։

1962 թ. հրատարակվեց Եվկլիդեսի երկրաչափության նորագույտ հայկական տեքստը[2], որը մեծ հետաքրքրություն է ներկայացնում հին և միջնադարյան Հայաստանում մաթեմատիկայի պատմությամբ զբաղվողների համար։ Միաժամանակ այդ տեքստը կարևոր աղբյուր է Եվկլիդեսի Երկրաչափության նախնական տեքստը (հատկապես միջնադարյան տարբերակները) ուսումնասիրելու համար։

Տոմարագիտական և տիեզերագիտական աշխատություն է Հ. Ս. Բաղալյանի «Օրացույցի պատմությունը»[3], ուր տրվում է աշխարհի տարբեր ժողովուրդների օգտագործած տարբեր սիստեմների օրացույցների, ինչպես նաև հայկական տոմարի պատմությունը։

Խորհրդի հրատարակությամբ լույս է տեսել Ռ. Բ. Գարրիելյանի «Միրայել Նալբանդյանը և բնագիտությունը»[4] աշխատությունը, ուր հեղինակը բացահայտում է կենսաբանության բնագավառում հայ հեղափոխական դեմոկրատի մատերիալիստական հայացքները։

Ուշադրավ է Բ. Գ. Մելքումյանի «Հայաստանի պղնձարդյունաբերության պատմությունը»[5] աշխատությունը։ Հիմնականում ըստ արխիվային և ձեռագրային նյութերի, հեղինակը Հայաստանի մետաղագործության և լեռնային գործի պատմության ընդհանուր ֆոնի վրա շարադրում է պղնձարդյունաբերության պատմությունը XVIII դարի երկրորդ կեսից մինչև սովետական կարգերի հաստատումը։

1968 թ. լույս տեսավ Ա. Ս. Կծոյանի «Բժշկագիտությունը Հայաստանում XI—XIII դարերում»[6] աշխատությունը։ Հեղինակը ցույց է տալիս, որ դարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանում հայ բժիշկները, հենվելով հելլենիստական, բյուզանդական և արաբական բժշկագիտության նվաճումների վրա, հաջողությամբ շարունակել են զարգացնել բժշկագիտության տարբեր ճյուղերը։

Հայկական հին ձեռագրերում պահպանված տեղեկությունների հիման վրա Հ. Գ. Հարությունյանը «Մանկաբարձությունը ու գինեկոլոգիան Հայաստանում հին և միջին դարերում»[7] մենագրության մեջ ցույց է տալիս այդ գիտության զարգացման բարձր մակարդակը X—XIV դդ.։ Մասնավորապես նա նշում է, որ միջնադարյան Հայաստանում կատարվել են մանկաբարձական այնպիսի բարդ վիրահատումներ, ինչպես պտղաշրջումը, պտղահատումը և կեսարյան հատումը։

Տպագրության պրոցեսում են Հ. Ս. Բաղալյանի «Հայոց տոմարը», Լ. Ա. Ավագյանի «Հովհաննես Կարապետյան» աշխատությունները և «Բնագիտության և տեխնիկայի պատմությունը Հայաստանում» ժողովածուի VI հատորը։

Մենք թվարկեցինք խորհրդի անմիջական հրատարակությունները։ Հարկ է նշել, սակայն, որ բնագիտության պատմության վերաբերյալ հանրապետությունում հրատարակվող շատ աշխատությունների հեղինակները բնագիտության ու տեխնիկայի պատմության և փիլիսոփայության սովետական ազգային միավորման հայկական բաժանմունքի անդամներ են, որոնք աշխատում են խորհրդի մասնակցությամբ նախօրոք կազմված գիտահետազոտական պլանի համաձայն։

Բնագիտության պատմության բնագավառում կատարվող աշխատանքներին մեծապես խթանում են միջազգային, միութենական և հանրապետական գիտաժողովները։ 1959 թ. սկսած բնագիտության հայ պատմաբանները մասնակցում են գիտության պատմության միջազգային կոնգրեսներին։ Դրանցում հայ գիտության անցյալը լուսաբանող զեկուցումներով հանդես են

---

[1] Բնագիտության և տեխնիկայի պատմությունից. հատ. 1. Երևան, 1960, հատ. 2, 1962, հատ. 3, 1964։ Բնագիտության և տեխնիկայի պատմությունը Հայաստանում, հատ. 4, Երևան, 1967, հատ. 5, 1973։

[2] «Երկրաչափություն Եվկլիտին», Երևան, 1962 (տեքստը հրատարակության պատրաստեցին Գ. Բ. Պետրոսյանը և Ա. Գ. Աբրահամյանը)։

[3] Հ. Ս. Բ ա ղ ա լ յ ա ն, Օրացույցի պատմությունը, Երևան, 1970։

[4] Ռ. Բ. Գ ա ր ր ի ե լ յ ա ն, Մ. Նալբանդյանը և բնագիտությունը, Երևան, 1966։

[5] Բ. Գ. Մ ե լ ք ո ւ մ յ ա ն, Հայաստանի պղնձարդյունաբերության պատմությունը, Երևան, 1972։

[6] Ա. Ս. Կ ծ ո յ ա ն, Բժշկագիտությունը Հայաստանում XI—XIII դարերում, Երևան, 1968։

[7] Г. Г. А р у т ю н я н. Гинекология и акушерство в Армении в древнее и средние века. Ереван, 1974.

եկել ՀՍՍՀ ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամներ Վ. Կ. Զալոյանը, Ա. Բ. Բաղդասարյանը, պրոֆեսորներ Գ. Բ. Պետրոսյանը, Ա. Ք. Հարությունյանը, Բ. Ե. Թումանյանը և ուրիշներ։ Գիտության պատմության միջազգային XIII կոնգրեսում, որը տեղի ունեցավ 1971 թ. Մոսկվայում, Հայաստանից մասնակցեց 25 մարդ, այդ թվում 7-ը հանդես եկան զեկուցումներով։ Վերջին, XIV կոնգրեսում (1974, Ճապոնիա) «Հայ-բյուզանդական կապերը մաթեմատիկայի բնագավառում» թեմայով զեկուցմամբ հանդես եկավ պրոֆ. Գ. Բ. Պետրոսյանը։

Ավանդական են դարձել գիտության պատմության անդրկովկասյան կոնֆերանսները, որոնք հաջորդաբար տեղի են ունենում Երևանում, Թբիլիսիում և Բաքվում՝ երեք հանրապետությունների, ինչպես նաև միութենական այլ քաղաքների գիտության պատմաբանների մասնակցությամբ։ Դրանցից առաջին և չորրորդ կոնֆերանսները անց են կացվել Երևանում (1965 և 1972 թթ.)։ Երկու կոնֆերանսի նյութերն էլ հրատարակվել են առանձին գրքերով[8]։ Հայ գիտնականները ակտիվ մասնակցություն են ունեցել նաև գիտության պատմության անդրկովկասյան II և III կոնֆերանսներին, ըստ որում II կոնֆերանսում (1967, Բաքու) Հայաստանից կարդացվել է 12 զեկուցում, իսկ III-ում (1969, Թբիլիսի)՝ 26 զեկուցում։

Խորհուրդն իր գործունեությամբ նպաստում է նաև կադրերի պատրաստմանը։ Վերջին տարիներին գիտության տարբեր ճյուղերի պատմության վերաբերյալ թեմաներով պաշտպանվել են դոկտորական և թեկնածուական մի շարք դիսերտացիաներ։

Ներկայումս խորհուրդը նախապատրաստական աշխատանքներ է տանում 1976 թ. Բաքվում կայանալիք անդրկովկասյան կոնֆերանսին և գիտության պատմության միջազգային XV կոնգրեսին մասնակցելու համար (վերջինս տեղի կունենա 1977 թ. էդինբուրգում)։

Խորհրդի առաջիկա խնդիրներից հիմնականն է՝ ստեղծել աշխատություններ այն գիտությունների պատմության գծով, որոնց վերաբերյալ առայժմ չկան առանձին մենագրություններ և ապա՝ եղած բոլոր աշխատությունների հիման վրա տալ բնագիտության սկզբնավորման ու զարգացման ամբողջական պատմությունը Հայաստանում մինչև սովետական կարգերի հաստատումը։ Սովետական շրջանի պատմությունը նախատեսվում է տալ առանձին գրքով, որը կընդգրկի 60-ամյա շրջան (1920—1980 թթ.)։

Պրոֆ. Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԹՈՐՈՍ ԱԶԱՏՅԱՆԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ

Պոլսահայ նշանավոր գրող, բանասեր և մշակութային գործիչ Թորոս Ազատյանի (1898—1955) արխիվային նյութերի հավաքածուն Հայաստանի Գրականության և արվեստի թանգարան է տեղափոխվել 1957 թ. նրա այրու՝ տիկին Շուշանիկ Ազատյանի, եղբոր՝ Վահան Ազատյանի և պոլսահայ մտավորականության սիրալիր օժանդակությամբ[1]։

Հավաքածուն ընդգրկում է 15000-ից ավելի վավերագրեր, որոնք բնութագրում են Թ. Ազատյանին որպես գիտական-պատմական վավերագրերի բազմահմուտ հավաքչի։

Թ. Ազատյանը 1920—1950-ական թթ. հրատարակել է երկու տասնյակից ավելի գրքեր՝ «Ազգայուր անմահության» բանաստեղծությունների 3 հատորները, «Զմրուխտե պատմուճան» խորագրով պատմվածքների, արձակ բանաստեղծությունների և հեքիաթների ժողովածուն և այլ գեղարվեստական գործեր, մենագրություններ Կոմիտասի, Միսաք Մեծարենցի և այլ մշակութային գործիչների մասին, պատմական հետազոտություններ Պոլսի հայկական վարժարանների, ամիրայական տների, պարբերական մամուլի վերաբերյալ։ Նրա գրչին են պատկանում «Ակն ու ակնեցիք» ուշագրավ ազգագրական աշխատությունը, տարեգրքեր, հուշամատյաններ, հուշագրություններ, ուղեգրություններ։ Միևնույն ժամանակ նա եռանդուն մասնակցություն է բերել պոլսահայ մամուլին. երեք տասնյակից ավելի պարբերականներում տպագրել է հարյուրավոր հոդվածներ հայ գրականության անցած ու ժամանակակից դեմքերի

[8] «Вопросы истории науки», Ереван, 1967; «Труды IV Закавказской конференции по истории науки», Ереван, 1974.

[1] Այսպիսի հայրենասիրական լայն գործ են կատարում նաև Լիբանանի, Եգիպտոսի, Իրանի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի առաջադիմական կազմակերպությունները, խմբագրությունները, առաջավոր մտավորականությունը, որի շնորհիվ տարեց-տարի աճում են Հայաստանի Գրականության և արվեստի թանգարանի ֆոնդերը՝ գաղափար տալով սփյուռքահայ գրական, թատերական և երաժշտական կյանքի մասին։